ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0010, ք.Երևան, Վ. Սարգսյան 5

№ ԴԴ-3- Ջ- 4312

«18» հուլիսի 2014 թ.

**«ԳԱԿ-ԾՀԾՁԲ-11/9» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում գրանցված մասնակիցներին**

Հարգելի մասնակից

«ԳԱԿ-ԾՀԾՁԲ-11/9» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և նշված ծածկագրով շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկում ներառված կազմակերպությունների միջև կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսված ծառայություն: Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում «ԴԴ-ԾՀԾՁԲ-11/9-5»:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել www.armeps.am կայքի (այսուհետ՝ կայք) միջոցով ոչ ուշ քան 2014թ. հուլիսի 31-ը, ժամը 11:00-ն:

Ընթացակարգի հանձնաժողովի քարտուղարն է՝ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի գնումների համակարգման բաժնի պետ Գ. Ներսիսյանը (հեռ. 010 511 788, 010 511 787 ):

Հայտերը կբացվեն 2014թ. հուլիսի 31-ին, ժամը 11:00-ին կայքի միջոցով:

Գնման առարկա է հանդիսանում «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար հսկողության համակարգերի սպասարկման ծառայությունների ձեռքբերումը:

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար՝ հսկողության համակարգերի սպասարկման ծառայությունների (որոնք կազմված են 6 չափաբաժիններից) տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) N3 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N1), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ (Հավելված N2): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է արժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Մասնակիցները կարող են ընթացակարգի հայտ ներկայացնել ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի, այնպես էլ միաժամանակ մի քանի կամ բոլոր չափաբաժինների համար:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ԾՀԾՁԲ-11/9» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ datgnumner@mail.ru:

Առդիր՝ 13 էջ:

**ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ,**

**ԳԼԽԱՎՈՐ ՖԻՆԱՆՍԻՍՏ՝** [signature] **ՌՇՏՈՒՆԻ ԱՍԻԿՅԱՆ**

Կատ՝. Գնումների համակարգման բաժին
Հեռ.՝ 511-788, 511-787